# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
հասցե գ. Ֆանտան Գիննան Ոպանյանի փող. 50, հեռախոս (0226) 6-11-55, էլ. փոստ fantan-gjukhapetaran@mail.ru

*Ելից 78.2-13*
*08 օգոստոսի 2013*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Շահգալդյան

Ի լրումն 2013 թվականի օգոստոսի 6-ի թիվ 77.2-13 գրության, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 15-ի թիվ 6 նիստի թիվ 29-Ն որոշումը:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 29-Ն

## ՖԱՆՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլ տալ համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0014-0015 ծածկագրով 1,3134 հա բնակելի կառուցապատման հողատարածքից 1200-ական քմ հողատարածքներ անհատույց տրամադրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ու օրենքով նախատեսված դեպքերում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք ցանկություն են հայտնել մշտական բնակություն հաստատել Ֆանտան համայնքում՝ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՌԱԴԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՔԱՋԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ